Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 5 -ի N 617 -Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԳԼՈԲԱԼԱՑՎՈՂ ԱՇԽԱՐՀՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Աշխարհի շուրջ 50 պետություն ունի սփյուռք և սփյուռքի հետ աշխատանքների կազմակերպման պետական մարմին: Այդ մարմինները մինչև այժմ համատեղ որևէ հավաք կամ խորհրդակցություն չեն անցկացրել, չնայած, որ սփյուռքների հիմնախնդիրները շատ տեղերում նույնն են:

Հայկական տարբեր համայնքներում Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հիմնական գործառույթներն իրականացնելիս ինչպես նախարարությունը, այնպես էլ համայնքային կառույցներն ու կազմակերպություններն առնչվում են այլ ժողովուրդ-ների սփյուռքների հետ, որոնք միմյանց հետ գրեթե չեն համագործակցում: Այդ իսկ պատճառով, տարբեր սփյուռքների միջև համագործակցության անհրաժեշտություն է առաջանում ինչպես համայնքային, այնպես էլ տարածաշրջանային ու համաշխարհային մակարդակներով:

Համաժողովն անցկացվելու է Երևանում, 2011 թվականի մայիսի 26-27-ը, որին մասնակ-ցելու է 50 մասնակից:

II. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Համաժողովի ընթացքում նախատեսվում է քննարկել հետևյալ հիմնախնդիրները՝

1) պետություն - սփյուռք հարաբերությունների զարգացման հեռանկարները.

2) սփյուռք ունեցող պետությունների միջև համագործակցության հարցը՝ ի շահ սփյուռքներում ազգային ինքնության պահպանման և համայնքային կյանքի զարգացման.

3) սփյուռք ունեցող պետությունների և սփյուռքի գտնվելու վայրի պետությունների միջև սերտ կապերի հաստատման հարցը՝ ի շահ արտերկրում բնակվող հայրենակիցների և հյուրընկալ պետության.

3) սփյուռքը Միավորված ազգերի կազմակերպության հոգածության առարկա դարձնելու, նրա իրավունքների և պարտականությունների մասին համապատասխան փաստաթղթի ստեղծման աշխատանքների կազմակերպման հարցը.

4) ազգային սփյուռքների միջև ուղղակի համագործակցության հարցը՝ ի շահ ժողովրդավարական արժեքների զարգացման, մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության և ազգային ինքնության հարատևման:

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3. Ակնկալվող արդյունքներն են՝

1) սփյուռք ունեցող պետությունների միջև փորձի փոխանակումը.

2) սփյուռք ունեցող պետությունների միջև համագործակցության ձևաչափի մշակումը.

3) սփյուռք ունեցող պետության և սփյուռքի գտնվելու վայրի պետության միջև համագործակցության ձևաչափի մշակումը.

4) միջկառավարական պայմանագրերի կնքման հնարավորությունների քննարկումը.

5) համաժողովի մասնակիցների կողմից Միավորված ազգերի կազմակերպությանը՝ սփյուռքի մասին հոչակագիր մշակելու և ընդունելու վերաբերյալ նյութերի քննարկումը և պատրաստումը.

6) համաժողովը խթան կհանդիսանա սփյուռքի վերաբերյալ միջազգային փաստաթղթի մշակման համար, քանի որ մինչ այժմ նման փաստաթուղթ չկա:

IV. ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

4. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման՝ ծրագիրը Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության պատվերով իրականացնելու է <<Հայրենիք-սփյուռք կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

5. Համաժողովի կազմակերպման և անցկացման համար պահանջվող գումարը կազմում է Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված 08 բաժնի, 02 խմբի, 05 դասի <<04. Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրի <<Հայաստանի Հանրապետությունում համահայկական խորհրդաժողովների անցկացում>> միջոցառման շրջանակներում՝ 10000000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ